ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ և ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ>> ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՊ-ԳՀԾՁԲ-18/17-131-2018

ք. Երևան «22» 05 2018թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյանի, որը գործում է որը գործում է նախարարության կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տիգրան Բալդրյան Արայի» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Տ. Բալդրյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր» մարզական միջոցառման անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն,

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 418000 (չորս հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Ք.Երևան Արովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011002996 ՀԿՀՀ 02586282	Ա/Ձ Տիգրան Բալդրյան Արայի Երևան, Բաբաջանյան 4/34 Արարատբանկ ԲԲԸ ՀՀ 1510044106440100 ՀԿՀՀ 83812178
Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան	Տնօրեն՝ Տ. Բալդրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
20 թ. կնքված
«22» 05 2018 համաձայագրով պայմանագրի

ՍՊ ԳՀԾՁԲ 18/17-132

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	92621110/1		Դրամ	418000	1		*III-IV - եռամսյակ (25.09.2018-28.10.2018)*
						ՀՀ 38 տարածաշրջաններ, Երևան քաղաքի 12 վարչական շրջաններ	1-ին փուլ՝ 25.09.2018-8.10.2018թ ը
						ՀՀ 10 մարզեր, ք. Երևան և Ստեփանակերտ	2-րդ փուլ՝ 10.10.2018-20.10.2018թ.
						Ք.Երևան Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ	3-րդ փուլ՝ 20.10.2018-28.10.2018թ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

«Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր» 2018 թվականի մարզկան միջոցառման անցկացման ծառայությունների ձեռբերում՝

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի ծրագրի նպատակն է՝ երիտասարդության կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, ինչպես նաև հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, ավագ տարիքի դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մոնիտորինգի անցկացում, ինչպես նաև դպրոցականների և երիտասարդության շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության և զանգվածային մարզական աշխատանքների հետագա բարելավում:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի ծառայությունը մատուցվում է երեք փուլերով՝ տարածաշրջանային, մարզային և հանրապետական:

Ռազմամարզական խաղերն անցկացվում է Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 9-12 -րդ դասարանների աշակերտների միջև:

Ռազմամարզական խաղերի տարածաշրջանային փուլի մրցումները անցկացվելու է ՀՀ 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում: Մասնակիցը պարտավոր է նախատեսված վկայագրերը (հավաստագրերը) հասցնել ՀՀ մարզեր և Երևանի վարչական շրջաններ սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 08-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում (համաձայն ՄՍՖԴՔ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցի) և տեղերում կազմակերպել տարածաշրջանային փուլի մրցանակակիրների պարգևատրման արարողությունը:

Ռազմամարզական խաղերի մարզային փուլը անցկացվելու է 2018 թվականի հոկտեմբերի 10-20-ը, ՀՀ 10 մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում: Խաղերը կազմակերպելու և անցկացնելու համար մասնակիցը պարտավոր է նախատեսված վկայագրերը (հավաստագրերը) հասցնել ՀՀ մարզկենտրոններ հոկտեմբերի 10-20-ը ընկած ժամանակահատվածում (համաձայն ՄՍՖԴՔ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցի) և տեղերում կազմակերպել մարզային փուլի մրցանակակիրների պարգևատրման արարողությունը:

Ռազմամարզական խաղերի հանրապետական փուլը կազմակերպվելու և անցկացվելու է 2018 թվականի հոկտեմբերի 25-28-ը՝ Երևան քաղաքում Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, կմասնակցեն ՀՀ 10 մարզերի, Երևան քաղաքի փուլում 1-ին տեղը գրաված դպրոցի հավաքական թիմերը, թվով 99 մարզիկ և 11 ներկայացուցիչ:

Մասնակիցը պարտավոր է Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում ապահովել խաղերի ծրագրով ներառված՝ Նռնակի նետում, 8 կգ-անոց ուսապարկով փոխանցավազք (4 x 50 մ), Ձգումներ պտտաձողից, Կրոսավազք (1000 մ), Հրաձգություն օդամղիչ հրացանով և Ինքնաձիգի բանդում-հավաքում մարզաձևերի մրցումների կազմակերպման և անցկացման աշխատանքները: Մասնակիցը պարտավոր է ապահովելել անհրաժեշտ գույքով և պարագաներով՝ մրցումները կազմակերպելու համար՝ համապատասխան մարզասրահներ, մարզադաշտ վազքուղիներով, համապատասխան տարածք՝ նախօրոք նախապատրաստված փակ տարածքով անվտանգության պահանջները կատարելու և նռնակի նետում վարժությունը կատարելու համար, 10 մետր երկարությամբ հրաձգարանի տրամադրում, ապահովելով օդամղիչ հրացաններով 10հատ, փամփուշտներով՝ 1000 հատ, թիրախներով 100 հատ, կահավորել համապատասխան մարզագույքով՝ նռնակներ (Ֆ-1 ուսումնական) 6 հատ, ապահովել բժշկական օգնության և ապասարկման ծառայություն (3 օր):

Մասնակիցը Խաղերի փակման հանդիսավոր արարողությունը կազմակերպելու, մրցանակակիրների պարգևատրությունը կազմակերպելու համար պետք է հոկտեմբերի 28-ին տրամադրի համապատասխան տարածք ձևավորված ՀՀ դրոշներով, մրցման խորհրդանիշ պաստառներով, (տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ), միաժամանակ պարտավոր է ապահովել համապատասխան հաղորդավարի ծառայություն, ռադիո տեխնիկա-բարձրախոսներով, մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար:

Նախագործակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի տարածաշրջանային, մարզային և հանրապետական փուլերի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալ պարագաները՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկներին և դպրոցներին պարգևատրելու համար

Վկայագրեր (հավաստագրեր, շնորհակալագիր)՝ խտությունը՝ 220-260 գ/քմ, չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ: Հավաստագրերի տեսքը և տեքստերը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ, կից ներկայացվում է նաև հավաստագրի ձևը: **242 հատ**

Տարածաշրջանային փուլի համար՝ 3 հատ x 50 =150 հատ.

Մարզային փուլի համար՝ 3 հատ x 11 մարզ = 33 հատ.

Հանրապետական փուլի համար՝ 59 հատ.

Հուշանվեր (գավաթներ) մրցանակակիր դպրոցներ՝ 4 հատ, որից՝

1-ին տեղ՝ 60 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով. **1 հատ**

2-րդ տեղ՝ 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով. **1 հատ**

3-րդ տեղ՝ 40 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով. **1 հատ**

Մրցանակ (գավաթ)՝ 1-ին տեղը գրաված դպրոցին (փոխանցավազք), 40 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով **1 հատ**

Յուրաքանչյուր գավաթի պատվանդանի վրա գրվում է՝

«Ռազմամարզական խաղեր-2018» և համապատասխան գրաղեցրած տեղը:

Հանրապետական փուլերի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մարզիկներին պարգևատրելու համար անհրաժեշտ է հետևյալ մրցանակները՝

- **Շախմատ՝** **10 լրակազմ.**
- **Դարթս՝** **10 հատ.**
- **Ֆուտբոլի գնդակ** **10 հատ.**
- **Վոլեյբոլի գնդակ** **5 հատ**

• **Շախմատ՝** պատրաստված փայտյա կամ պլաստմասե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան: Փայտյա կամ պլաստմասե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ), մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան.

- **Դարթս՝** պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից.
- **Ֆուտբոլի գնդակ՝** կաշվե հումքից. N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով).

- **Վոլեյբոլի գնդակ՝** կաշվե կամ փոխարինող հումքից. N 5, 6 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով), բազմերանգ գունավորմամբ.

Մարզագույքի որակը և տեսքը համաձայնեցնել ՄՄՖԴՔ վարչության հետ՝ մրցումներից 3 օր առաջ.

Խաղերի ժամանակ մրցավարական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ գրենական պարագաները.

-Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով,
A4 (210 x 297մմ) ձևաչափի թերթերի համար, **6 հատ**
-Ժապավեն գունավոր պոլիթիլային ժապավեն (սկոչ) 48 մմ x 100 մ չափսի.
անվտանգության տարածքը փակելու համար՝ **10 հատ**
-
-Թուղթ A4 չափսի1 (21 x 29.7), չկավճած թուղթ,
օգտագործվում է տպագրման համար, թելիկներ
չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված
80 գ/մ² (210 x 297) մմ, **1 հատ**

-Գելային-գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել), **1 հատ**
-Գրիչ գնդիկավոր, Տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով,
մեծ և փոքր չափսերի, **10 հատ**

** Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 05 մարտի 2018 թ. N 39 Ա/1 հրամանով հաստատված Նախագծակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման 2018 թվականի կանոնակարգի պահանջների համաձայն.*
*** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը.*
**** Մրցույթի 2-րդ և 3-րդ փուլերում փուլերում Կատարողը հավաստագրերը հասցնում է (ՀՀ 38 քաղաք, Երևանի 12 վարչական շրջան) մրցավայրեր:*
***** Եզրափակիչ փուլին՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր (ք. Երևան), համաձայն ժամանակացույցի, պարգևատրման ցանկի համապատասխան կազմում է նվերների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում կազմում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաղաբականության վարչության հետ:*
******Հրավերին կից ներկայացվում է հավաստագրի օրինակելի ձևը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Ք.Երևան Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ՀՎՀՀ 900011002996 ՀՍՀՀ 02586282	ԱՁ Տիգրան Բալդրյան Արայի Երևան, Բաբաջանյան 4/34 Արարատբանկ ԲԲԸ, ՀՎՀՀ 15100441064400100 ՀՍՀՀ 83812178
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան	Տնօրեն՝ Տ. Բալդրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 2
„ 22 „ 05 2018 թ. կնքված
ՍՊ-ԳՀՄՁԲ-18/17 -131-2018 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աճողական Հազ ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ /«Նախագծանախահաշվային և գրանցողական տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր»/							418.0	418.0	418.0	418.0	418.0	418.0	418.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարություն
Ք.Երևան Արովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011002996
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան

(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ա/Ձ Տիգրան Բալդրյան Արայի
Երևան, Բաբաջանյան 4/34
Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 15100441064440100
ՀՎՀՀ 83812178

Տնօրեն Տ. Բալդրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«22» 05 2018թ. կնքված
ՄՊ-ԳՀՇՁԲ-18/17-131-2018 համակարգով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
„22" 05 2018թ. կնքված
ՍՊ-ԳՀՇՁԲ-18/17-131-2018 համակարգով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն